ԱՋ ՁԵՌԱՑ ՎԻՐՔԻՆ

Ո՛վ իմս ամենասիրելի Յիսուս, խորին մեծարանօք առջևդ ինկած, ամենասուրբ Կուսին Մարիամու, Հրեշտակաց և Երկնից սրբոց հետ, կը պաշտեմ աջ ձեռացդ Ս. վէրքը. կը գոհանամ անհուն սիրոյդ որով այնչափ դառն ցաւեր ուզեցիր կրել ի քաւութիւն իմ մեղքերուս, զորս կ՚ատեմ բոլորով սրտիս, և կը խնդրեմ որ ազատես Սրբազան Քահանայապետը իր թշնամիներէն և բոլոր քահանայք այսօր սրբութեամբ մատուցանեն Ս. Պատարագը։ Հայր Մեր. Ողջոյն. Փառք։ Հօր։

ՁԱԽ ՁԵՌԱՑ ՎԻՐՔԻՆ

Ո՛վ իմս ամենասիրելի Յիսուս, խորին մեծարանօք առջևդ ինկած, ամենասուրբ Կուսին Մարիամու, Հրեշտակաց և Երկնից սրբոց հետ, կը պաշտեմ ձախ ձեռացդ Ս. վէրքը և կը խնդրեմ քու սուրբ շնորհքդ՝ մեղաւորաց դարձին, հոգեվարքներուն և անոնց համար որ հետդ հաշտուիլ չեն ուզեր։ Հայր Մեր. Ողջոյն. Փառք։ Հօր։

ԱՋ ՈՏՔԻ ՎԻՐՔԻՆ

Ո՛վ իմս ամենասիրելի Յիսուս, խորին մեծարանօք առջևդ ինկած, ամենասուրբ Կուսին Մարիամու, Հրեշտակաց և Երկնից սրբոց հետ, կը պաշտեմ աջ ոտքիդ Ս. վէրքը և կը խնդրեմ որ բոլոր կրօնաւորական Կարգաց և Միաբանութեանց մէջ շատ Սուրբեր ծաղկեցնես։ Հայր Մեր. Ողջոյն. Փառք։ Հայր։

Խաչելեալն Յիսուս
առ Հաշտեալն Մարդկութիւն։

ՁԱԽ ՈՏՔԻ ՎԻՐՔԻՆ

Ո՛վ իմս ամենասիրելի Յիսուս, խորին մեծարանօք առջևդ ինկած, ամենասուրբ Կուսին Մարիամու, Հրեշտակաց և Երկնից սրբոց հետ, կը պաշտեմ ձախ Ոտքիդ Ս. վէրքը, խնդրելով որ ազատես Քաւարանի Հոգիները, և ի մասնաւորի զանոնք՝ որ ջերմեռանդ եղան քու Սուրբ վիրացդ։ Հայր Մեր. Ողջոյն. Փառք։ Հօր։

ԿՈՂԻ ՎԻՐՔԻՆ

Ո՛վ իմս ամենասիրելի Յիսուս, խորին մեծարանօք առջևդ ինկած, ամենասուրբ Կուսին Մարիամու, Հրեշտակաց և Երկնից Սրբոց հետ, կը պաշտեմ Կողիդ Ս. Վէրքը. և կը խնդրեմ որ օրհնես թեմիս Հովուապետը և բոլոր զանոնք՝ որ աղօթքով մեզ յանձնուեցան։ Հայր Մեր. Ողջոյն. Փառք։ Հօր։

Կոյս ամենացաւագին, աղօթեա վասն մեր (3 անգամ)։

Ո՛վ քաղցր Յիսուս, Զարշարանացդ զօրութեամբ լսէ մեր աղօթից, տուր մեզ սրբութիւն վարուց, մահուան պահուն Ս. խորհուրդները կարենալ ընդունելու շնորհքն և երկնից յաւիտենական երջանկութիւնը։

---

300 օրաւուն Ներողութիւն ամէն անգամ ըսողին, խաչուածի հոգւոյ համար ալ փրկագործելի։
Բենեդիկտոս ԺԵ, 6 Մայիս 1915

Ամենասուրբ Խաչելութեան և Անարատ Յղութեան ընկերութիւնը որ Քրիստոնէական Դպրոցներու Եղբայրներէն հաստատուեցաւ Թորինի մէջ, 1914 Մայիս 9-ի Արքեպիս-

կոպուսական կոնդակով, կը գտնուի Գերպ. Անէլոյ Պարթոլոմազի Եպիսկոպոսին բարձրը հովանաւորութեան ներքև։ Այս ընկերութեան նպատակն է արծարծել ուղղափառաց և ի մանաւորի պատանիներու սրտերուն մէջ քրիստոնէական բարեպաշտութեան ոգին, սուրբ եռանդ, և հոգևորական հաստատուն։

Ընկերութեան անդամները երեք դասակարգէ կը կազմուին. կրօնաւորներ, Տարածիչներ և Աբոնանագրուածներ.

Կրօնաւորները կը սովորեցնեն կրօնագիտութիւն և ունին ժողովներ, ուսներ և առանձին կանոններ։

Տարածիչները՝ կրօնաւորներուն օգնական հաւատացեալներն են. հետևեալ պարտքերն ունին

1. «Խաչելեալ Փրկչին Ջերմեռանդութիւն»ը ամէն օր կատարել և զայն ջանալ տարածել։
2. Գոնէ ամիսն անգամ մը հաղորդուիլ։

Աբոնանագրուածները՝ «Խաչելեալ Փրկչին Ջերմեռանդութիւն»ը կատարող հաւատացեալներն են։

Տարածիչ կամ Աբոնանագրուած ըլլալու փափաքողը, պէտք է գրկէ. Անունը և Մականունը, Հասցեն եւ Դասակարգը, որ իրաքանչիւր ոք կը փափաքի ունենալ Ընկերութեան մէջ։

Աբոնանագրութիւնը ձրի է, բայց չեն մերժուիր ի պէտս Ընկերութեան ճամբուած նուէրները։

Տարածիչները ու Աբոնանագրուածները կը մասնակցին ներողութիւններուն և բարի գործերուն զոր Ընկերութեան անդամները կը կատարեն։

Ընկերութիւնը ձրի կը բաշխէ «Խաչելեալ Յիսուսի Ջերմեռանդութեան» թերթիկս և կը խրատէ բոլոր ուզողներուն։ Տնօրէնութեան Հասցէն այս է. Via S. Massimo, 21—Torino (2)։

ՀԱՍՏԱՏԱԳԻՐՆԵՐ

Կ'աղօթենք առ Աստուած որ իր շնորհքներովը լեցնէ Տնօրէնը և բոլոր Խաչելեալ Յիսուսի Ընկերութեան անդամները կանոնաւէս հաստատուած ի Թորինոյ, որպէս զի Քահանաները խօսքով ու գործով, և աշխարհականները սուրբ վարքով քարոզեն միշտ «Խաչելեալն Յիսուս Քրիստոս»։

(Վատիկան 18 յունուար 1915)

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԵ ՊԷՆՑՊՏ.

Բենեդիկտոս ԺԵի թանկագին խօսքերուն իբրև արձագանք, կը մաղթենք ամենասուրբ Խաչելութեան ընկերներուն սուրբ զգլման ոգին և Աստուծոյ առատ շնորհները։

ՕԳՈՍՏԻՆՈՍ ԿԱՐՏԻՆԱԼ
Թորինի Արքեպիսկոպոս

13 մարտ 1915.

Տպելու արգելք չկայ

Թորինոյ 3 յունիս 1920

Աստուածաբան ՊԱՌԼՈՑ ՖԷՐԲԷՐՈՑ
ՖՐԱՆՉԻՍԿՈՍ ՏՈՒԻՆԱ, փոխանորդ

Ամենայն իրաւունք վերապահեալ

Հրատարակ

ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ

ԱՌ

ԽԱՉԵԼԵԱԼՆ ՅԻՍՈՒՍ

ՆՊԱՏԱԿ ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԵԱՆ

1. Պատուոյ հաստուցում մ'ընել անհամար անարգանաց փոխարէն, զորս Յիսուս Քրիստոս կը կրէ ամբարիշտներէ, հայհոյիչներէ և ապերախտներէ որոնք արտաքսել կ'ուզեն զինքը դպրոցներէն, ընտանիքներէն և մարդկային ընկերութենէն։
2. Աբծարծել սրտերու մէջ մեղաց զզջում, երախտագիտութիւն և սէր առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս և բուռն փափաք զինքն սատէպ Ս. Հաղորդութեամբ ընդունելու։
3. Տարածել քրիստոնէավայել կեանք ընտանիքներու մէջ, մանկանց բարի դաստիարակութիւն և մեղաւորաց դարձ։

ԿԵՐՊ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ

Ըստ կարելւոյն, ծնրադրել Խաչելեալ Փրկչին պատկերի մը դիմաց, յարգանօք երկրպագել իր Հինգ Վիրաց, ու մեր և ուրիշներու մեղաց ներումն խնդրել, ըսել հետևեալ աղօթքները.

Քր. Աստուած յօգնել ինձ նայեա։

Ս. Եւ Տէր շընկերել ինձ փութա։ Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ։ Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։